ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Ն. Ս. Օ. Տ. Տ.
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՄԸ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՎԱՔԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻՆ
/1 հոկտեմբեր 2023թ., Բրյուսել/

Սիրելի զավակներ Մեր,

Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հղում ենք ձեզ Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները: Հայրապետիս համար մխիթարական է տեսնել, որ Եվրոպայի տարբեր քաղաքներից հազարավոր հայորդիներ այսօր հավաքվել են Բրյուսելում, որտեղ գործում են Եվրոպական Միության կարեւոր շատ կառույցներ, եւ իրենց միասնական բողոքի ձայնն են բարձրացնում՝ ընդդեմ Ադրբեջանի կողմից Արցախի մեր խաղաղասեր ժողովրդի նկատմամբ կիրառվող ցեղասպանական քաղաքականության:

Վերջին երեք տարիների ընթացքում Ադրբեջանը՝ ոտնահարելով միջազգային իրավունքի բազմաթիվ դրույթներ եւ օգտվելով իր ռազմական գերակայությունից ու միջազգային հանրության ոչ համարժեք արձագանքից, Արցախի մեր ժողովրդի նկատմամբ իրականացրեց եւ իրականացնում է անմարդկային ոճրագործություններ, որոնց զոհ դարձան մեր ազգի անթիվ հերոս զավակներ, կանայք, ծերեր ու երեխաներ: Շուրջ ինը ամիս շրջափակելով Արցախը եւ շուրջ հարյուր քսան հազար մարդու հասցնելով սովամահության եզրին, Ադրբեջանի իշխանությունները փորձեցին այդ ձեւով ընկճել ու ծունկի բերել Արցախի մեր հերոս ժողովրդին: Չհասնելով իրենց նպատակին՝ նրանք կրկին դիմեցին զենքի բիրտ ուժի ու լայնածավալ ռմբակոծության ենթարկեցին Արցախի Հանրապետության բազմաթիվ բնակավայրեր՝ ներառյալ մայրաքաղաք Ստեփանակերտը: Հակառակ ուժերի սարսափելի անհավասարության՝ Արցախի պաշտպանության բանակի քաջամարտիկները կենաց եւ մահու պայքարում հերոսաբար դիմադրեցին թշնամուն եւ փորձեցին պաշտպանել Արցախի ժողովրդի իր պատմական հայրենիքում ապրելու իրավունքը: Ցավոք միջազգային հանրությունը միայն խոսքով դատապարտեց Ադրբեջանի հերթական վայրագությունները: Արցախը իր գոյապայքարում մնաց միայնակ, և Ադրբեջանը կարողացավ ստիպել Արցախի իշխանություններին՝ ընդհատել դիմադրությունը եւ համաձայնել ուժի բռնությամբ թելադրված իր պայմաններին:

Այսօր, սիրելի զավակներ Մեր, մենք կանգնած ենք Արցախ աշխարհը՝ մեր վերածննդի ու հաղթանակների խորհրդանիշը, կորցնելու մեծագույն վտանգի առաջ: Արցախի հերոսական ժողովուրդը, խուսափելով ստույգ մահից, ստիպված լքում է իր պատմական հայրենիքը: Թշնամին պղծում է մեր նահատակ զինվորների շիրիմները, պատմական նվիրական սրբատեղիները, օտարում կամ ոչնչացնում Արցախի հայկական մշակութային ու հոգեւոր հարուստ ժառանգությունը: Հայ ժողովուրդը՝ Հայաստանում եւ ի Սփյուռս աշխարհի, իրավունք չունի լռել՝ ի տես այս աղաղակող

անարդարության ու ցեղասպանական դրսեւորումների: Մենք իրավունք չունենք հուսալքվելու, այլ հաստատուն հավատքով պիտի շարունակենք մեր պայքարը՝ հանուն արդարության, հանուն իրենց պապենական հողում ազատ, անկախ ու անվտանգ ապրելու՝ արցախցիների անօտարելի իրավունքի:

Սիրելի զավակներ Մեր, Մենք բարձրորեն գնահատում ենք Բրյուսելում եւ եվրոպական այլ մայրաքաղաքներում ձեր բողոքի ձայնը բարձրացնելու և Արցախին ու Հայաստանին զորակցելու ձեր ազնիվ հանձնառությունը: Վստահ ենք, որ միասնական ոգով ու հայրենիքի հանդեպ պարտականությանց բարձր գիտակցությամբ մեր ժողովուրդը պիտի կարողանա դիմակայել դժվարություններին եւ հետևողական ընթացքով արդյունավորել իր ջանքերը՝ ի նպաստ մեր երկրի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման ու մեր պայծառ գալիքի:

Թող Տերն Ամենակալ խաղաղության ու բարօրության մեջ պահպանի մեր Հայրենիքը եւ համայն մեր ժողովրդին:

«Արթուն կացեք, հաստատուն մնացեք հավատի մեջ, քաջ եղեք, զորացեք: Ինչ որ անեք, սիրով արեք». Ամեն: (Ա Կրնթ. ԺԶ 13-14):

Օրհնությամբ՝

Գարեգին Բ

Կաթողիկոս Ամենայն Հայոց